

տուեաներուն մէջէն կարծես խնդացող մարդկանց ու զինարբուաց աղմկալից աղաղակները կը լսէի: Ինչպիսի տարբեր երևոյթ կը ներկայացընէր ինծի այս կողմի զառ ի վայրը քան զմիւսը, ուր ամենայն ինչ լռութիւն էր և գոգցես չիրմի անդորրութիւն:

Այլ յանկարծ ինծի գալով դարձայ ծերունիս խնդրելու, և ահա ոչ էր. իբրև շամանդաղ անդգալի՝ ցնդեցաւ, անյայտ եղաւ ինծմէն: Խնդրեցի զնա և ոչ գտաւ տեղի նորա. կանչեցի անոր անունը՝ և ոչ ուստեք էր բարբառ նորա. իբր մեր կենաց օր մը՝ անհետ սպառեցաւ:

Յետին ըոպէն ալ սահեր անցեր էր:

Այլ երբ իմ շրջանիս ալ յետին ըոպէն մերձենայ, երբ ես ալ ալեգարդ ծերունոյն քալած ճամբայն հասնիմ, արդեօք վշտաց բեռս, որուն ծանրութիւնը արդէն զգալ սկսայ, և զոր ծերունին թեթևագոյն մաղթեց, ըլլայ պիտի իրապէս թեթև:

Մահկանացուդ, զուր տեղ կրից ու փառաց համար կ'աշխատիս. վերջին ըոպէն անհրաժեշտ և շուտ կը հասնի. քեզի ալ ինչպէս ամենուն, և ինչ որ իրապէս ձեռքդ կը մնայ՝ բարեգործութիւնդ է. չարիքներդ երկանաքարն են որ քեզ վհհը կ'ընկղմեն:

Հ. ՅԱԿ. ԽՍԵԱՅԲՏԵՆՑ:

Բարոյական և քաղաքական տնտես-
ւոյթիւն:

(Տես Հատ. ԻԸ, էրես 360)

ԽՆՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Սեպհականութիւն արդիւնք աշխատութեան և
հիմն հասարակաց բարեկեցութեան

Պատմած աղետալի շփոթութիւննիս հետեանքն ունեցաւ. նորանոր վախեր աւելցուց հնձոց նուազութենէն պատ-
ճառեալ անհանգստութեան վրայ: Այն ցաւալի տեսարաններուն հանդիպելէն

ետքը եղած եօթնեկամառաց մէջ շատ քիչ ապրանք կ'երևար, և դնոց բարձրութիւնը և ևս աճեցաւ, որով սղառումս աւելի կը նուազէր, աշխատութիւնը կը դադրէին և ամեն կողմանէ գործատուներ կը փակուէին:

Միւրապոյի ժողովուրդն անձկութե և տագնապի մէջ էր. կ'ըսուէր թէ դարբնոցին տէրերը սաստիկ խնայողութիւն պիտի սկսէին ընել. ըստ ոմանց միայն մտածութիւնը գործաւորաց թիւը պակսեցընելուն վրայ էր, մինչդեռ ըստ այլոց՝ ամենայն գործատուք պիտի փակուէին: Ոմանք կ'ըսէին թէ խնդիրը միայն ռոճիկները քիչցընելուն վրայ էր. վերջապէս կային ոմանք ալ որ կ'ապահովցընէին թէ Լընուար և Տիւպիւիսսոն մէկ գործաւոր մ'ալ պիտի չճամբէին, աւուրչէքները պիտի չպակսեցընէին, այլ միայն չարաթիւան մէջ աշխատութեանց օրերուն թիւը պիտի քիչցընէին. ոմանք երկու օր միայն պիտի ըլլայ կ'ըսէին, ոմանք՝ երեք, այլք՝ չորս:

Համառօտ ըսել՝ ոչ ոք ստոյգ բան մը գիտէր՝ բայց ամենայն ոք մտատանջութեան մէջ էր և կանխաւ հազար ու մէկ մեկնութիւններ կը տրուէին. իւրաքանչիւր ոք իր տեսութեան կէտովը կը դիտէր և հասարակաց բարօրութեան վրայ ամենին չէր տագնապեր. ևս առաւել ըստ Լընուարի և Տիւպիւիսսոնի շահուն մտածող ամենին չկար. իսկ իրենք ինչ ընելիքնին չէին գիտեր և հարցընողներուն այս պատասխանը տալ բաւական կը համարէին, թէ « կը շարունակենք որչափ որ կրնանք »: Բայց թէ պիտի կարենային երկայն ատեն շարունակել՝ ոչ ոք կը հաւատար:

Ուստի գործաւորաց խմբերուն մէջ տաք տաք խօսակցութիւնք անպակաս էին՝ ճաշու կամ գործատուներն արձրկուելու ժամանակ: Անդրէաս Պոննը-Ֆուա, Լէոնարտոս Տիւպուա և այլք ոմանք գրեթէ միշտ նիւթ տուողներն էին, մտիկ ընողներն ալ ձայնարկութիւններով գոհ կ'ըլլային իրենց հաւանիլը կամ չհաւանիլը իմացընելու. սակայն Անդրէաս նշանաւոր յաջողակու-

Թիւն մ'ունէր նոր մտածութեանց խելք հասցընելու, այլ պակասաւոր էր անով՝ որ դիւրաւ բան բանի հետ կը խառնակէր. ընդհակառակն լէոնարտոս աւելի հանդարտ էր և լաւ ևս կը պատճառաբանէր. բայց ան ալ շատ անգամ կը մոլորէր խօսակցութեանը հիմը սխալ մտածութեան վրայ կայացընելուն համար:

Շաբաթ իրիկուն վճարման ժամա, նակ՝ գործաւորաց ամենեւին ծանուցմունք չեղաւ, անով մտածութեան ծանր բռնէ մը ազատեցան. ապահով էին եօթնեակ մը առջնին ունենալուն, և եօթնեակ մը՝ շատ բան ըսել էր այնպիսի պարագայից մէջ:

— Մեր տէրերն աղէկ մարդիկ են, ըսաւ ընտանեաց տէր ոստայնանկ մը, այնպիսի մէկն որ աշխատութեանց դադրելովը շատ նեղը կ'իյնար. չեն ուզեր նեղութիւն տալ խեղճ գործաւորաց, որոնք միայն իրենց աշխատութեամբը կ'ապրին:

— Մեր տէրերը կը ծիծաղին քու վրադ, Մօրիկ, ըսաւ մանող մը Պօղոս Պուալդար՝ աւելի յարատե՛ի գինիքան յաշխատութիւն. կ'աշխատցընեն զքեզ, վասն զի յայնմ իրենց շահը կայ:

— Ինչպէս կարելի է, Պօղոս. բայց ես ապահով եմ որ զքեզ արձըկելու կը ցաւին. բաւական ատեն կայ որ քանի իրենց կը հանդիպիմ՝ միշտ սաստիկ տխուր կը տեսնեմ:

— Կարծես թէ քու պատճառաւդ է ատիկայ, Մօրիկ. շատ միամիտ ես, չես իմանար որ իրենց գործոցն համար է տաղնապնին. չեն գիտեր թէ բաները ինչպէս պիտի դառնան:

— Ինչպէս կ'ուզես անանկ սեպէ, Պօղոս. ես կարծեմ թէ զմեզ արձըկել չեն ուզեր:

— Քիչ ատենէն կը տեսնենք, ըսաւ երրորդ մը:

— Բան մը տեսնելիք չունիս, ըսաւ Անդրէաս: Եթէ դարձեալ գործոց յաջողութիւն չըլլայ՝ հարկ է որ այլոց պէս ընեն. և այն ատեն ինչ ըսել կ'ըլլայ:

— Ըսել կ'ըլլայ թէ իրենց բանուորները չեն սիրեր:

— Ես կ'ըսեմ թէ այնու ևս բան մը ըսել չըլլար, միշտ չեն կրնար աշխատցընել առանց ծախել կարենալու:

— Բայց իրենք հարուստ են. ըսաւ Մօրիկ, ջանալով ցուցընել թէ միշտ անպակաս գործ կրնար ըլլալ:

— Տարակոյս չկայ թէ իրենք հարուստ են, բայց հարստութիւն չկայ հոն՝ ուր օրուան մէջ 15,000 ֆր. ծախք կ'ըլլուի առանց մէկ վաստակի մը: Չկայ քսակ մը՝ որուն խորը շտեմնուի, երբ միշտ ստակ հանենք անկէ առանց ամենին երբեմն ալ փնելու: Եւ երբ ալ ստակ չունենան՝ ինչպէս կ'ուզես որ քեզի վճարեն:

— Ո՛հ, միթէ չեն կրնար փոխ առնուլ, ըսաւ նոր խօսակցութեան մէջ մտնող մը:

— Հապա, իրաւ է, — ըսաւ Անդրէաս՝ այս տղայական առարկութեան վրայ զարմացած, թէպէտ և յանկարծակի եկած: Ասոր վրայ խօսակցութիւնն ընդհանուր եղաւ. շատոնք մէկէն խօսքի մէջ մտան. յաջ և յահեակ վիճեցին և այս միակ հետեանքն հանեցին թէ ծանր ու դժնեայ էր գործաւորաց համար վրանին տէրեր ըլլալը և անոնցմէ կախումն ունենալը:

Երկրորդ օրը Տիւրրէ խօսակցութիւնն այսպէս սկսաւ.

— Բարեկամքդ իմ, ձեզի խօսք տըւած եմ սեպհականութեան վրայ խօսելու. այսօր խոստմունքս պիտի կատարեմ:

Սեպհականութիւնն է մեզի վերաբերեալ որ և իցէ բանը վայելելու իրաւունքնիս. արդ բան մը այնպէս չի վերաբերիր մարդուս, ինչպէս իւր աշխատութեանցն արդիւնքը, և զայն վայելելու կարողութիւնն է՝ որով կը յորդորուի ջանալու ու ճգնելու: Մարդուս սրտին մէջ սեպհականութեան զգացմունքն այնպէս բնատուր է՝ որ նոյն իսկ մանկահասակ տղուն վրայ կ'երևայ դեռ դաստիարակութեամբ իմս, քուշդ բառերուն նշանակութիւնը չսորված:

Fig. 1



Fig. 2.




Fig. 5.




Fig. 6.






Fig.






Fig. 7.

g. 4.






Fig. 8.



Սոյն զգացմունքն ընկերութեան ամենայն փիճակաց մէջ կը գտնենք . վայրենին՝ զոր կրնանք իբրեւ տղայ մը համարիլ՝ իրեն սեպհական ինչ մը կը համարի սպաննած կենդանին՝ որպէս զի անոր մտովն ապրի ու մորթովը ծածկուի . իրեն ձեռագործ նետերն ու աղեղը կը պահպանէ, և եթէ անոնցմէ զրկուի՝ աշխատութիւն յանձն կ'առնու ու դարձեալ կը շինէ :

Ամեն տեղ ուրեմն սեպհականութիւն կայ, վասն զի տնկակից է մարդուս բնութեանը մէջ . բայց սեպհականութեան իրաւունքն հաստատելը՝ կերպ կերպ առիթներու մէջ զգուշութիւններ կը պահանջէ . վասն զի կրթեալ ժողովրդոց մէջ ստացողաց թիւն և ստացեալ իրաց զանազանութիւնը դժուարութիւն կը պատճառեն, որով առաջին տեսութեամբ ամենայն իրաց յատուկ տէրը չի գիտցուիր : Ամենին դժուարութիւն չելլեր հազած զգեստնուս նշկատմամբ, ամենայն ոք գիտէ թէ հագուստնիս մերն է : Եթէ մէկը փողոցին մէջ մէկու մը քսակը գողնայ՝ մէկէն յայտնի կ'ըլլայ թէ ուրիշի սեպհականութեանը վնասող է և իբրեւ գող կը բռնուի :

— Բայց ամեն բան վրանիս չենք կրնար կրել, ըսաւ Ռնորիոս . չեմ կրնար հետս տանիլ անկողինս, զգրոցս, արուեստանոցս :

— Այս բաներուս նկատմամբ ալ դեռ դժուարութիւն մը չկայ . վասն զի եթէ վրանիս ալ չի կրննք՝ սակայն տունեանուս մէջն են ուր կ'ապրինք և ծանօթ է ամենուն թէ հոն բնակողին յատուկ ստացուածքն են անոնք : Դժուարութիւնն ուրիշ կերպ իրաց վրայ է :

Մարդուս սեպհական կրնան ըլլալ կամ շարժուն ինչք՝ այսինքն շարժելի կամ տեղափոխելու ենթակայք՝ ինչպէս են կահ կարասիք, ստակ, վաճառք . կամ անշարժ ինչք, այսինքն է՝ ի բնէ հաստատուն եղող նիւթեր, ինչպէս են տունք, երկիրներ : Այս վերջին ստացուածքը ճշդելը դժուար է : Մէկը տուն մը՝ դաշտ մը կը գնէ, բայց չի կրնար

միշտ հոն կենալ և ոչ ալ հետը կրել, և եթէ ուզենայ ծախել չի կրնար անոր ձեռքն յանձնել՝ որուն որ կը թողու . այն ատեն օրէնքն իրեն օգնական կ'ըլլայ . դրեալ զանազան մուրհակօք՝ որք մուրհակք սեպհականութեան կ'ըսուին, ամենուն յայտնի կ'ըլլայ թէ այսպէս ստացեալ տունը կամ դաշտը գնողին յատուկ ինչքն է : Ասանկ սահմանեալ իրաւամբք տուն, երկիր, անտառ, ուրիշ որ և իցէ անշարժելի բաներ ունողք՝ կրնան առանց տագնապելու հեռանալ անոնցմէ . օրէնքն առանդապահ է իրենց սեպհականութեանը :

— Գիտէք թէ ընկերութիւնն ինչ մեծ ծառայութիւն կ'ընէ մարդկանց, գոչեց Տիւպուս, իրաւունքնին ապահովցնելու համար օրէնքներ հաստատելով . որչափ նեղութիւններէ կ'ազատէ զիրենք :

— Այս ծառայութեան մեծութիւնը շատ աւելի կ'իմանանք՝ երբ այն իրաւամէջ խնդրոց վրայ մտածենք՝ որ կրնան այս իրաւանց առջին հանդիպիլ . այսպէս տուն մը կրնայ երեք կամ չորս անձանց վերաբերիլ . ինչք շատ անգամ զրաւ կ'ըլլան և կրնայ ըլլալ որ պարտատիրոջ կամ փոխատուին բանին ձեռք չի տար դնել այն ստացուածքը՝ ինչպէս նաև պարտընկալին ալ ծախելը . այսպիսի պարագայի մէջ օրէնքը երկուքին ալ իրաւունքը կ'ապահովցնէ, և հոգ կ'ունենայ որ պարտընկալը չկարենայ ծախել իւր ինչքն ի վնաս պարտատեարցը :

Գիտէք նաև թէ ոմանք Տէրութեան քով փոխ ստակ դրած են որ հաւաքաւ կաց ինչք կ'ըսուի . ահաւասիկ անոր ալ ինչպէս սկզբնաւորիլը՝ նեղութեան ժամանակ շատ անգամ ազգերը մեծամեծ պարտքեր կ'առնուն, զորոնք տուրքերով միայն կրնան վճարել : Գաղղիոյ մէջ այս պարտուց բովանդակութիւնն է եօթը միլիարէն աւելի . զոր անկարելի ըլլալով մէկէն ի մէկ վճարելը՝ բաւական կը համարի կանոնաւորապէս շահը կամ եկամուտը վճարել . ուստի այն անձանց համար որ ազգին փոխ տուած

են՝ կ'ըսենք թէ տէրութեան քով ստակ դրած են, կամ թէ ըսել հասարակաց ընչից մէջ կամ եկամուտի, ինչպէս որ ռամկօրէն աւելի կ'ըսենք: Ազգը շահը կը վճարէ և եկամուտ առնողը եթէ պէտք ունենայ ձեռք բերելու իւր ինչքը՝ երբ որ ուզենայ կրնայ ետ առնուլ. իր եկամուտին անուանագիրը կը թողու մէկու մը՝ որ դնելիք ստակ ունենալով կը գնէ զայն իրմէ և իր տեղը կը բռնէ: Ազգին փոխ առած ստակին տեղ այս պէս վճարած շահը՝ ամենէն աւելի ապահով կերպով ստակ շահի դնելու կերպը կը սեպուի. վասն զի եթէ ազգը պարտքը վճարելուն մէջ պակսի՝ չըկայ սեպհականութիւն մը որ ածէք ունենայ:

— Կ'ենթադրուի, ըսաւ Անդրէաս, ազգին պատուոյն վրայ է՝ խնդիրը. բայց խնայողութեան արկղին մէջ դրած ըստակնիս ըստ ինքեան Տէրութեան քով դրուած ստակ չի համարուիր:

— Հապա, բարեկամդ իմ, և քու մատենիկդ տիտղոսմ'է՝ որովհու Տէրութեան փոխատու կը սեպուիս. ստակդ ապահով է Տէրութեան քով դրուած ընչից պէս. ուստի ամենայն շիթութիւնք որոնցմով կը պակսի Տէրութեան վրայ եղած վստահութիւնը՝ թէ արդեօք պիտի կարենայ ըստ կանոնի պարտքը վճարել, պէտք է վախ ձգեն անոնց սրտին մէջ՝ որք խնայողութեան արկղին ինչք կ'աւանդեն:

Հասարակաց համար մեծամեծ աշխատութեանց ձեռք զարնել ուզող միաբանութիւնները կամ ընկերագրութիւններն ալ՝ գործերնին գլուխ հանելու համար շատ դրամադուխտներ փոխ կ'առնուն. որոնք որ փոխ ստակ կուտան՝ այս աշխատութեանց սեպհական ընչիցը մասնակից են, և օգնակաւք գործատեարց (coopropriétaires) կը կոչուին, նաև գործառնողք (actionnaires), վասն զի գործք կամ արարք (actions) կ'ըսուին անուանագիրը կամ՝ յարացոյցք իւրաքանչիւր ումք տուած ստակին համեմատ պատասխանող թրղութիւնը կամ թէ ըսել սեպհականութեան

մէջ իրենց մասը ցուցնող մուրհակնէրը: Այս անուանագիրքն ալ ըստ օրինի ճշդեալ և հաստատեալ պէտք է ըլլան, և կրնան վաճառելի և փոխանցելի ըլլալ ուրիշ որ և իցէ սեպհականութեանց պէս:

— Բայց, ըսաւ Լէոնարտոս, կերպ կերպ իրաց համար քանի մը անձանց իրաւունքն ապահովցնելով՝ ընկերութիւնը զայլս կը զրկէ իրենց իրաւունքէն. ընչեղներուն ծառայութիւն կ'ընէ կարօտ եղողները տուածցնելով:

— Սխալ է ըսածդ Լէոնարտոս: Նախ և առաջ ո՞վ է մեր մէջը ըստ ամենայնի կարօտ. և ոչ դք, և ոչ իսկ յետին աղքատք. ամենքնիս ալ գոնեա զգեստներ, քանի մը կահ կարասիք ու գործիքներ ունինք: Դու ալ Լէոնարտոս՝ որ դքեզ ըստ ամենայնի կարօտ եղողաց թուոյն մէջ կ'ուզես երեցընել, շարժուն ինչք ունիս, գործիքներ և շատ մը առօթ ու կազմած ունիս, աղէկ զգեստներ, քանի մը զիրք. և եթէ քեզի յատուկ փոքրիկ տնակ մը չունիս և խընայողութեան արկեղ մէջ աւելի ստակ, անիկա ալ քու չուզելէդ է, վասն զի անորդի ես ու անկին, և ամենեկին ծախքի բռնադատութիւն չունիս: Հարուստ ես դու, թող որ ըսեմ, շատ մը խեղճ ողորմելիներուն համեմատութեամբ, որոնք անտրտուն չեն ինչպէս տեսեր եմ՝ զանազան աշխարհաց մէջ. իսկ ամենամեծ հարուստ՝ վայրենւոյ մը հետ բաղդատելով:

Իսկ սխալ է ըսելը թէ՝ սեպհականութեան համար եղած պաշտպանութիւնը միայն ի նպաստ ընչեղաց է, ինչպէս որ ապացուցի ձեզի հաւաստելով թէ հարստութիւնը բարիք է ընկերութեան ամենայն զասուց համար: Հարստութիւն ստանալ և յառաջ բերելն՝ օգտակար ըլլալ է, վասն զի ընկերական ինչքը շատցընել է. ուստի նաև հարստութեա պահպանութեան օգնելն ալ բարերարութիւն է: Անկարելի է աշխատութեան պաշտպան կենալ առանց պաշտպանելու զսեպհականութիւն՝ որ անոր արդիւնքը կը պահպանէ: Եթէ մարդիկ

իրենց աշխատութեան պտուղը չվայելին՝ աշխատութիւն ընելէ կը դադրէին :

— Բայց ասիկա , հարցուց լէոնարտոս , մարդուս անձնասիրութեան ըզգացմունքը զրգուել ըսել չէ :

— Լէոնարտ , միշտ անձնասիրութիւն մի անուաներ մարդուս այս զգացմունքն որ ունի ծառայել արդար վարձուց հատուցմամբ : Անձնասէր ուրեմն պէտք է ըսել քեզի՝ աշխատութեանդ փոխարէնը վճարել տալուդ համար : Պարսաւելի անձնասէր է մէկն երբ զայլս յանիրաւի իրեն կրիցը կը զոհէ , կամ նախանձու աչքով կը տեսնէ ուրիշներուն իրմէ աւելի ունեցածը : Միթէ արժանի և իրաւ չէ որ ամենայն ոք իր և աշխարհք բերած որդւոցը պէտքը հոգայ : Արդ ով որ մարմնոյ կամ մտաց աշխատութեամբ ծառայութիւն մը կ'ընէ իր երկրին և այնչափ ստակ կը թողու որ զաւկրներն անկարօտ ըլլան՝ այսպիսին կըրկին բարիք ըրած է :

Բայց բաւական չէ մարդուս իւր աշխատութեան արդիւնքը պահպանելը և վայելելը միայն՝ վասն զի այնու զմեզ աշխատութեան յորդորողը սոսկ անձնասիրութիւնը կ'ըլլար , ինչպէս քիչ մ'առաջ կ'ըսէիր . պէտք է որ մարդս կարենայ իւր շահածը մահուընէն ետքը ուրիշի ժառանգութիւն ձգել . ասիկա սոսկ կերպ մի է ազատութեան՝ զոր ունինք մեզի վերաբերեալ բանը շնորհելու . այս ազատութիւնը բանեցնելը մեր կենացը վերջին գործը կ'ըլլայ : Ասոր համար է որ ամենայն կիրթ ազգաց մէջ՝ ընկերութիւնը քաղաքացւոց իրաւունքը կ'ապահովցնէ որ կարենան կտուկաւ իրենց ստացուածոցն համար հրամայել՝ ի բաց առեալ քանի մը ամիսով մոնք ի շահ ընկերութեան կամ ի շահ արդարութեան և մարդկութեան :

Ընդհակառակն ուր որ քաղաքացիք չեն վայելիր ապահովութեամբ և չեն կրնար կարգաւորել ազատութեամբ իրենց ստացուածքը՝ ընկերութիւնը տըղայութեան մէջ կը մնայ . պատմութիւնը վկայ է ըսածս հաստատելու համար ,

և կը տեսնենք ստուգապէս թէ ամեն ժամանակ առաջին կարգի ծաղկեալ ազգերն անոնք եղան՝ ուր աղէկ պաշտպանեալ էր սեպհականութիւնը : Նոյն իսկ հիմակուան ժամանակս՝ որ ազգերն են Եւրոպայի մէջ մեծահարուստ և բարեկեցիկ . բայց եթէ անոնք որ մեծաւ երաշխաւորութեամբ կը հսկեն քաղաքացեաց ստացուածոց համար . ընդհակառակն տեսէք Ասիոյ այն կողմերը ուր ամենեին ապահովութիւն չիկայ և միշտ վտանգ կայ ծանր ծանր աշխատութեամբ ձեռք բերուած որ և իցէ բան կորսնցնելու . բնութեան տռձեռն շռայլած ամենայն նպաստիւքն հանդերձ՝ վաճառականութիւնը մեռած է այն տեղերու մէջ , երկրագործութիւնն ու արուեստական ճարտարութիւնը միշտ ետ մնացած , ոչ ոք կը համարձակի երբեք գործոյ մը ձեռք զարնելու , վասն զի ամենեին ապահովութիւն չկայ աշխատութեան արդիւնք քաղելու . հազիւ թէ քիչ մը ժողովուրդ կրնայ ապրիլ այն երկիրներուն մէջ՝ որ կրնային տասնապատիկ աւելի բնակիչ սնուցանել :

Կը շարունակուի :

ՌԱԲԷ

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Բնահոշիւր՝ և քրոշահիւր .

(Տես Հատ . ԻԸ . Էրես 364)

Ահա ուրեմն , սիրելի օրիորդիկ , հասնք մեծ խորհրդին մեկնութեանը , որ է շնչառութեան ինչո՞ւ համար : Ինքզինքդ հաստատ բռնէ , որովհետեւ ա-

1 Բնածնութեան անունն է :